



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«1957 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԴԱՐՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 2020 թվականի հունվարի 24-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ Կառավարության դիմումը՝ 1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

2020 թվականի փետրվարի 7-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ հիշյալ գործն ընդունվել է քննության և դատաքննության օր է նշանակվել 21.04.2020թ.:

Գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում ի հայտ են եկել Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության և բնօրինակի (անգլերեն) տեքստերի միջև թարգմանչական էական, բովանդակային անհամապատասխանություններ:

2020 թվականի մարտի 31-ին՝ սույն գործով Սահմանադրական դատարանում Կառավարության ներկայացուցչին ուղարկվել է գրություն՝ Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության շտկված տեքստը Սահմանադրական դատարան ներկայացնելու անհրաժեշտության մասին:

2020 թվականի ապրիլի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված՝ սույն գործով Կառավարության ներկայացուցչի պատասխան գրությամբ վերջինս խնդրել է առնվազն երկու ամսով հետաձգել գործի դատաքննությունը՝ Համաձայնագրի ճշգրտված թարգմանությունն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանի 2020 թվականի ապրիլի 14-ի ՍԴԱՌ-85 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև Կառավարության կողմից Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տեքստը ստանալը:

2020 թվականի հուլիսի 28-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Կառավարության ներկայացուցչի 23.07.2020թ. գրությունը՝ կից ներկայացնելով Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տարբերակը: Սակայն Սահմանադրական դատարանի կողմից Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության ու անգլերեն բնօրինակ տեքստերի միջև կրկին էական անհամապատասխանություններ են հայտնաբերվել:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ին Սահմանադրական դատարանում սույն գործով Կառավարության ներկայացուցչին կրկին ուղարկվել է գրություն՝ Համաձայնագրի ամբողջական ու ճշգրիտ հայերեն պաշտոնական թարգմանությունն ապահովելու և սահմանված կարգով այն կրկին Սահմանադրական դատարան ներկայացնելու մասին:

2020 թվականի ապրիլի 2-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի գրությունը՝ կից ներկայացնելով Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տարբերակը:

Սահմանադրական դատարանի կողմից Համաձայնագրի՝ կրկին ներկայացված հայերեն պաշտոնական թարգմանության ու անգլերեն բնօրինակ տեքստերի ուսումնա-

սիրության արդյունքներով պարզվել է, որ դրանց միջև առկա բովանդակային անհամապատասխանություններն ամբողջությամբ վերացված չեն: Այլ կերպ՝ խնդրո առարկա գործով չեն վերացել գործի վարույթը կասեցնելու համար հիմք հանդիսացած հանգամանքները:

2. Դիմումի և դրան կից փաստաթղթերի, մասնավորապես՝ «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության ուսումնասիրությունից ելնելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ նույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված այն դեպքերում, երբ կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները չեն վերացել գործի վարույթը կասեցնելու մասին աշխատակարգային որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում սույն գործի վարույթը կասեցվել է 2020թ. ապրիլի 14-ին՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով, մասնավորապես՝ Կառավարության կողմից «1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տեքստը ստանալու նպատակով, մինչդեռ գործի վարույթը կասեցնելու մասին աշխատակարգային որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում նշված հիմքը չի վերացել (Համաձայնագրի բնագիր անգլերեն և հայերեն թարգմանված տեքստերի միջև առկա են էական անհամապատասխանություններ), և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«1957 թվականի սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

29 ապրիլի 2021 թվականի  
ՍԴԱՈ-87